



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavarigaghagapetaran@gmail.com


Ո Ր Ո Շ ՈՒ Մ
01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 1067-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ 6-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 51 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ
ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՄԼԵՏ ՍԵՐԳՈՅԻ ԲՈԶԻԿՅԱՆԻ, ՄԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐԻ
ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, ՀՐԱՅՐ ՀԱՄԼԵՏԻ ԲՈԶԻԿՅԱՆԻ, ԱՐՄԱՆ ՀԱՄԼԵՏԻ ԲՈԶԻԿՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՍ ԿԱՌՈՒՅՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ
ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական
բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, «Տեղական
ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի և «Ինքնակամ կառույցների
օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 18.05.2006թ.
N 912-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 05 հունվարի 2022թ-ի
N 13-Ն որոշման հաստատված կարգի պահանջներով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ.
«Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում
ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության,
անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման,
հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների
գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և
փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ. N 233-Ն պահանջներով,
հիմք ընդունելով 29.11.2022թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և
սեփականաշնորհման հանձնաժողովի 05.11.1991թ. թիվ 270 որոշումից քաղվածքը, Գավառ
համայնքի Միքայելյան 6-րդ փողոց թիվ 51 հասցեի համասեփականատեր Համլետ Սերգոյի
Բոգիկյանի /ծնված 28.01.1962թ-ին/ դիմումը, որակավորում ունեցող անձ Թաթուլ Աշոտի
Ջանոյանի /որակավորման վկայականի համար 0310՝ տրված 05.12.2013թ./ կողմից 08.08.2022թ-
ին տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափազրման տվյալների
մուտքագրման 2022F99RWZ ծածկագիրը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի
ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ համայնքի Միքայելյան 6-րդ
փողոց թիվ 51 հասցեում գտնվող ընդհանուր հողամասը չափազրվել է, հատկացվել է 0.09 հա,
ինչը փաստացի կազմում է 0.09000 հա, որը Համլետ Սերգոյի Բոգիկյանին /ծնված 28.01.1962թ-
ին/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի
առնելով, որ օրինական կառուցված 116.50 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների
/կառուցված 1990թ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.16541 հա հողամասը
չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների
ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի
առաջացնում սերվիտուտ, *որոշում եմ*

1. Վերականգնել Գավառ համայնքի Միքայելյան 6-րդ փողոց թիվ 51 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Համլետ Մերգոյի Բոգիկյանի /ծնված 28.01.1962թ-ին/, Մարինե Գրիգորի Գրիգորյանի /ծնված 21.01.1965թ-ին/, Հրայր Համլետի Բոգիկյանի /ծնված 23.09.1985թ-ին/, Արման Համլետի Բոգիկյանի /ծնված 28.08.1987թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.09000 հա ընդհանուր մակերեսով հողամասի նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:
2. Գավառ համայնքի Միքայելյան 6-րդ փողոց թիվ 51 հասցեի բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 116.50 քմ. մակերեսով բնակելի տունը /կառուցված 1990թ-ին/ ճանաչել օրինական՝ տրամադրելով ճարտարապետահատակագծային առաջադրանք կիսակառույցն ավարտին հասցնելու նպատակով:
3. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, Միքայելյան 6-րդ փողոց թիվ 51 հասցեն:
4. Շենք-շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմերին և դրանց մակերեսները որոշվում են քարտեզագրման, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների /անձի/ կողմից տրված հատակագծերին համապատասխան:
5. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
6. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

20 22թ. հոկտեմբերի ժ
ք. Գավառ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavariqaghaqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 1068-Ա

ԽՆԱՄԱՐԿՅԱԼԻ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ և 38-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2) կետի, ՀՀ Կառավարության 2016թ. հունիսի 2-ի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 631-Ն որոշմամբ հաստատված «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության» 9 կետի 4) ենթակետի «գ» պարբերության դրույթներով, հաշվի առնելով իր խնամարկյալ Գարիկ Մանվելի Հովակիմյանի գույքն օտարելու թույլտվություն ստանալու մասին Գավառ քաղաքի բնակիչ Ռուբեն Մանվելի Հովակիմյանի դիմումն ու հիմք ընդունելով գավառի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 01.12.2022թ. արձանագրությունը, *որոշում եմ*

1. Թույլատրել Գավառ համայնքի բնակիչ Ռուբեն Մանվելի Հովակիմյանին (անձնագիր AS0468988, տրված 21.12.2018թ.) օտարել Գավառ քաղաքի Ազատության փողոց 1-ին նրբանցք, 1-ին փակուղի թիվ 2 շենք թիվ 5 հասցեում գտնվող անշարժ գույքի՝ իր խնամարկյալ Գարիկ Մանվելի Հովակիմյանին (անձնագիր AT0330248, տրված 13.12.2019թ.) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 3/8 բաժնեմասը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2022թ. *դեկտեմբերի 01*
ք. Գավառ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavarigaghagapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 1069-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱՏՈՒՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ 05-071-0230-0336 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 9.734842Ա ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 76, 77, 78 հոդվածների, Հրապարակային սակարկությունների մասին ՀՀ օրենքի, «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ Կառավարության «Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» 2001 թ. ապրիլի 12-ի N286 որոշման պահանջներով, հիմք ընդունելով Գավառի համայնքապետարանի մրցութային հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 14-ի արձանագրությունները, **որոշում եմ**

1. Գավառ համայնքի Նորատուս բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական N13052022-05-0095 տրված 2022 թվականի մայիսի 13-ին անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից), 05-071-0230-0336 կադաստրային ծածկագրով 9.73484 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության 3-րդ կարգի հնդավոր գործառնական նշանակության հողամասը տարեկան 219100 /երկու հարյուր տասնինը հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամ վարձավճարով 2046 թվականը ներառյալ օգտագործման ժամկետով վարձակալությամբ տրամադրել մրցութում հաղթող ճանաչված Արմեն Վրույրի Կարապետյանին:

2. Արմեն Վրույրի Կարապետյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր:

3. Հանձնարարել համայնքի ղեկավարի խորհրդական Ռուբեն Կոխպեցյանին օրենքով սահմանված կարգով կնքել վարձակալության պայմանագիր:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2022 թ. դեկտեմբերի 01
ք. Գավառ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavariqaghaqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 1070-Ա

«ԼՃԱՓԻ ԱԱՊԿ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի, «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 16) կետի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 08.11.2022թ. թիվ 11 նիստի թիվ 160 որոշումը

1. Ծովագարդ գյուղի բուժակ-մանկաբարձական կետի բնականոն աշխատանքներն ապահովելու նպատակով Գավառ համայնքի Ծովագարդ գյուղի Զորավար Անդրանիկի փողոց 3-րդ նրբանցք թիվ 2 հասցեում գտնվող Ծովագարդի նախկին գյուղապետարանի վարչական շենքի մուտքից աջ 13 /տասներեք/ քմ մակերեսով սենյակն անհատույց օգտագործման իրավունքով, անժամկետ տրամադրել «Լճափի առողջության առաջնային պահպանության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:
2. Հանձնարարել համայնքապետարանի իրավաբանական բաժնի պետ Արա Գևորգյանին «Լճափի առողջության առաջնային պահպանության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել տարածքի անհատույց օգտագործման պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



2022թ. *դեկտեմբերի 1*
ք. Գավառ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavarigaghagapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 1071-Ա

«ԼՃԱՓԻ ԱԱՊԿ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի, «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 16) կետի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 08.11.2022թ. թիվ 11 նիստի թիվ 160 որոշումը

1. Հայրավանք գյուղի բուժակ-մանկաբարձական կետի բնականոն աշխատանքներն ապահովելու նպատակով Գավառ համայնքի Հայրավանք գյուղի Սևանի փողոց 1-ին նրբանցք թիվ 12 հասցեում գտնվող Հայրավանքի նախկին գյուղապետարանի շենքի մուտքից աջ 25 /քսանհինգ/ քմ մակերեսով սենյակն անհատույց օգտագործման իրավունքով, անժամկետ տրամադրել «Լճափի առողջության առաջնային պահպանության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:
2. Հանձնարարել համայնքապետարանի իրավաբանական բաժնի պետ Արա Գևորգյանին «Լճափի առողջության առաջնային պահպանության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել տարածքի անհատույց օգտագործման պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:



Գ. ՄԱՐԿԻՐՈՍՅԱՆ

2022թ. *դեկտեմբերի 01*
ք. Գավառ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavariqaghagapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 1072-Ա

«ԳԱՆՁԱԿԻ ԱԱՊԿ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի, «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 16) կետի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 08.11.2022թ. թիվ 11 նիստի թիվ 160 որոշումը

1. Ծաղկաշեն գյուղի բուժակ-մանկաբարձական կետի բնականոն աշխատանքներն ապահովելու նպատակով Գավառ համայնքի Ծաղկաշեն գյուղի 3-րդ փողոց թիվ 31 հասցեում գտնվող վարչական շենքի արևմտյան մուտքի 15 /տասնհինգ/ քմ մակերեսով սենյակն անհատույց օգտագործման իրավունքով, անժամկետ տրամադրել «Գանձակի առողջության առաջնային պահպանության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:
2. Հանձնարարել համայնքապետարանի իրավաբանական բաժնի պետ Արա Գևորգյանին «Գանձակի առողջության առաջնային պահպանության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել տարածքի անհատույց օգտագործման պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:



Գ. ՄԱՐԳԻՐՈՍՅԱՆ

20.22թ. *գեղարքունիքի*
ք. Գավառ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavariqaghaqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 1073-Ա

«ՄԱՐՈՒԽԱՆԻ ԲԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի, «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 16) կետի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 08.11.2022թ. թիվ 11 նիստի թիվ 160 որոշումը, **որոշում եմ**

- Գեղարքունիք գյուղի բուժակ-մանկաբարձական կետի բնականոն աշխատանքներն ապահովելու նպատակով Գավառ համայնքի Գեղարքունիք գյուղի Կարեն Դեմիրճյան փողոց թիվ 61/1 հասցեում գտնվող նախկին գյուղապետարանի շենքի երկրորդ հարկի մուտքից աջ 23 /քսաներեք/ քմ մակերեսով տարածքը անհատույց օգտագործման իրավունքով, անժամկետ տրամադրել «Սարուխանի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:
- Հանձնարարել համայնքապետարանի իրավաբանական բաժնի պետ Արա Գևորգյանին «Սարուխանի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել տարածքի անհատույց օգտագործման պայմանագիր:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2022թ. *դեկտեմբերի*
ք. Գավառ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavarigaghaqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 1074-Ա

«ՄԱՐՈՒԽԱՆԻ ԲԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի, «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 16) կետի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 08.11.2022թ. թիվ 11 նիստի թիվ 160 որոշումը, **որոշում եմ**

1. Լանջաղբյուր գյուղի բուժակ-մանկաբարձական կետի բնականոն աշխատանքներն ապահովելու նպատակով Գավառ համայնքի Լանջաղբյուր գյուղի մշակույթի տան շենքի հյուսիսային մուտքից աջ 15.3 /տասնհինգ ամբողջ երեք տասնորդական/ քմ և 17.6 /տասնյոթ ամբողջ վեց տասնորդական/քմ մակերեսներով սենյակները անհատույց օգտագործման իրավունքով, անժամկետ տրամադրել «Մարուխանի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:
2. Հանձնարարել համայնքապետարանի իրավաբանական բաժնի պետ Արա Գևորգյանին «Մարուխանի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել տարածքի անհատույց օգտագործման պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:



ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2022թ. 21
ք. Գավառ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavariqaghaqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 1075-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 47 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի 8-րդ հոդվածի, 16.11.1992թ.Հ.Ն.-0732-1 Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի, ՀՀ կառավարության 16.03.2020թ. N298-Ն որոշմամբ և պահպանելով ՀՀ պարետի 03.06.2020թ. N110-Ն որոշման պահանջները, **որոշում եմ**

1. Կոորդինացնել համայնքում սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների իրականացումը

2. Մշակել և կազմել համայնքի բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովմանն ուղղված տեղական ծրագրերը և իրականացնել վերահսկողություն դրանց կատարման նկատմամբ.

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՍԱՐԻՐՈՍՅԱՆ



2022թ. դեկտեմբերի 01
ք. Գավառ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavarigaghagapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 1076-Ա

ԱՐՅԱՆ ԿԱՄ ԴՐԱ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԻ ԴՈՆՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԶԱՐԳԱՑՄԱՆ,
ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԱՐԴՈՒ ԱՐՅԱՆ ԿԱՄ ԴՐԱ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԵՎ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՆՁՆՄԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 47 հոդվածի դրույթներով,
«Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական
օգնության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի և 5.11.2011թ ՀՕ-275-Ն, «Մարդու արյան և
դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին»
օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, *որոշում եմ*

1. Աջակցել արյան դոնորության քարոզչությանն ուղղված միջոցառումներին, տեսանելի
վայրերում ապահովելով լուսաբանող ցուցապաստառների տեղադրումը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2022թ. *դեկտեմբերի 01*
ք. Գավառ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԳԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavariqaghaqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 1077-Ա

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Քաղաքացի Տարոն Արշակի Մանուկյանը (անձնագիր՝ AP 0670281, ՀՕՀ՝ 3504910453, հաշվառված ՀՀ Գեղարքունիքի մարզ, Գավառ համայնք, գ. Նորատուս Սևանի փ. ,70 տ) հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունները, ինչի կապակցությամբ 2022 թվականի նոյեմբերի 15-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի „բ“ ենթակետի հիմքով Գավառի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գումարների գանձման հարցի քննության նպատակով:
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓԱՍՏԵՐԸ

Համաձայն ՀՀ ՀՔԲ-ի կողմից տրամադրված փոխադրամիջոցների հաշվառման ու գնահատման տվյալների, CHRYSLER GRAND VOYAGER 2.4 մակնիշի 59 MM 005, OPEL VECTRA 1.6 մակնիշի 59 ZZ 005 պետհամարանիշի փոխադրամիջոցները հանդիսանում են Տարոն Արշակի Մանուկյանի սեփականությունը, ինչը ՀՀ Հարկային օրենսգրքով հանդիսանում են հարկվող օբյեկտ:

Գույքի համար վճարման ենթակա գույքահարկը կազմում է 85792/ութսունհինգ հազար յոթ հարյուր իննսուներկու /ՀՀ դրամ, ինչը 2019-2021թթ. ժամանակահատվածում չի վճարվել, իսկ Տարոն Արշակի Մանուկյանի կողմից նշված ժամանակահատվածի գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է գույքահարկի համար տույժ՝ 20731/քսան հազար յոթ հարյուր երեսունմեկ/ՀՀ դրամի չափով:

2022 թվականի նոյեմբերի 15-ին «Վարչարարության և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի „բ“ կետի հիմքով Գավառի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանականերում 2022 թվականի դեկտեմբերի 02-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք՝ 15.11.2022թ. ծանուցում azdarar.am կայքում/ Տարոն Արշակի Մանուկյանը: Վերջինս չի ներկայացել վարչական վարույթի լսումներին: 02.12.2022թ. վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված Տարոն Արշակի Մանուկյանի բացակայությամբ:

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 239-րդ հոդվածի՝ փոխադրամիջոցի գույքահարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 240-րդ հոդվածի՝ փոխադրամիջոցների գույքահարկ վճարողներ են համարում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք: Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 46-րդ հոդվածի՝ տեղական հարկերի գծով հարկային պարտավորությունների կատարում /մարում/ է համարվում Օրենսգրքին համապատասխան հաշվարկված վճարման ենթակա հարկի, ինչպես նաև դրա գծով տույժերի և /կամ/ տուգանքների գումարների վճարումը համապատասխան հարկի գծով պարտավորությունը հաշվառող տեղական բյուջեի գանձապետական հաշվին:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 251-րդ հոդվածի՝ կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի տարեկան գումարները իրենց պետական գրանցման /հաշվառման/ վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի՝ համայնքի ղեկավարը որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը, ինչպես նաև տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ հարկային օրենսգրքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, **որոշում եմ**

1. Տարոն Արշակի Մանուկյանից հօգուտ Գավառ համայնքի բյուջե գանձել ընդամենը 106523/մեկ հարյուր վեց հազար հինգ հարյուր քսաներեք/ ՀՀ դրամ որպես CHRYSLER GRAND VOYAGER 2.4 մակնիշի 59 MM 005, OPEL VECTRA 1.6 մակնիշի 59 ZZ 005 պետհամարանիշի փոխադրամիջոցների գույքահարկերի գումար, ներառյալ տույժերը:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Գավառի համայնքապետին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Գավառ համայնքի ղեկավարը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման մասին օրենքով սահմանված պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրը:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2022թ. *դեկտեմբերի 02*
Բ. Գավառ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavariqaghaqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 1078-Ա

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Քաղաքացի Գարիկ Էդվարդի Հարությունյանը (անձնագիր՝ AR 0573310, ՀՕՀ՝ 4101900404, հաշվառված ՀՀ Գեղարքունիքի մարզ, Գավառ համայնք, գ. Նորատուս Սևանի փ., 12 տ) հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունները, ինչի կապակցությամբ 2022 թվականի նոյեմբերի 15-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի „բ“ ենթակետի հիմքով Գավառի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գումարների գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓԱՍՏԵՐԸ

Համաձայն ՀՀ ՀՔԲ-ի կողմից տրամադրված փոխադրամիջոցների հաշվառման ու գնահատման տվյալների, VAZ 21130-120 մակնիշի 47 LC 007 պետհամարանիշի փոխադրամիջոցը հանդիսանում է Գարիկ Էդվարդի Հարությունյանի սեփականությունը, ինչը ՀՀ Հարկային օրենսգրքով հանդիսանում են հարկվող օբյեկտ:

Գույքի համար վճարման ենթակա գույքահարկը կազմում է 54600/հիսունչորս հազար վեց հարյուր /ՀՀ դրամ, ինչը 2016-2021թթ. ժամանակահատվածում չի վճարվել, իսկ Գարիկ Էդվարդի Հարությունյանի կողմից նշված ժամանակահատվածի գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է գույքահարկի համար տույժ՝ 16226/տասնվեց հազար երկու հարյուր քսանվեց/ՀՀ դրամի չափով:

2022 թվականի նոյեմբերի 15-ին «Վարչարարության և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի „բ“ կետի հիմքով Գավառի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2022 թվականի դեկտեմբերի 02-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք՝ 15.11.2022թ. ծանուցում azdarar.am կայքում/ Գարիկ Էդվարդի Հարությունյանը: Վերջինս չի ներկայացել վարչական վարույթի լսումներին: 02.12.2022թ. վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված Գարիկ Էդվարդի Հարությունյանի բացակայությամբ:

ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 239-րդ հոդվածի՝ փոխադրամիջոցի գույքահարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 240-րդ հոդվածի՝ փոխադրամիջոցների գույքահարկ վճարողներ են համարում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք: Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 46-րդ հոդվածի՝ տեղական հարկերի գծով հարկային պարտավորությունների կատարում /մարում/ է համարվում Օրենսգրքին համապատասխան հաշվարկված վճարման ենթակահարկի, ինչպես նաև դրա գծով տույժերի և /կամ/ տուգանքների գումարների վճարումը համապատասխան հարկի գծով պարտավորությունը հաշվառող տեղական բյուջեի գանձապետական հաշվին:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 251-րդ հոդվածի՝ կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի տարեկան գումարները իրենց պետական գրանցման /հաշվառման/ վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի՝ համայնքի ղեկավարը որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը, ինչպես նաև տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ հարկային օրենսգրքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, **որոշում եմ**

1. Գարիկ Էդվարդի Հարությունյանից հօգուտ Գավառ համայնքի բյուջե գանձել ընդամենը 70826/յոթանասուն հազար ութ հարյուր քսանվեց/ ՀՀ դրամ որպես VAZ 21130-120 մակնիշի 47 LC 007 պետհամարանիշի փոխադրամիջոցի գույքահարկերի գումար, ներառյալ տույժերը:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Գավառի համայնքապետին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Գավառ համայնքի ղեկավարը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման մասին օրենքով սահմանված պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



2022 թ. սեպտեմբերի 02
ք. Գավառ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavarigaghaqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 1079-Ա.

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Քաղաքացի Ռուստամ Միհրանի Սահրադյանը (անձնագիր՝ AR 0598787, ՀՕՀ՝ 2310830186, հաշվառված ՀՀ Գեղարքունիքի մարզ, Գավառ համայնք, գ. Նորատուս Գր. Լուսավորչի փ. 6 նրբ., 3 տ) հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունները, ինչի կապակցությամբ 2022 թվականի նոյեմբերի 15-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի „բ“ ենթակետի հիմքով Գավառի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գումարների գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՓԱՍՏԵՐԸ

Համաձայն ՀՀ ՀՔԲ-ի կողմից տրամադրված փոխադրամիջոցների հաշվառման ու գնահատման տվյալների, MERCEDES-BENZ E300 DT մակնիշի 35 DL 411 պետհամարանիշի փոխադրամիջոցը հանդիսանում է Ռուստամ Միհրանի Սահրադյանի սեփականությունը, ինչը ՀՀ Հարկային օրենսգրքով հանդիսանում են հարկվող օբյեկտ:

Գույքի համար վճարման ենթակա գույքահարկը կազմում է 373800/երեք հարյուր յոթանասուներեք հազար ութ հարյուր /ՀՀ դրամ, ինչը 2013-2021թթ. ժամանակահատվածում չի վճարվել, իսկ Ռուստամ Միհրանի Սահրադյանի կողմից նշված ժամանակահատվածի գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է գույքահարկի համար տույժ՝ 134470/մեկ հարյուր երեսունչորս հազար չորս հարյուր յոթանասուն/ՀՀ դրամի չափով:

2022 թվականի նոյեմբերի 15-ին «Վարչարարության և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի „բ“ կետի հիմքով Գավառի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2022 թվականի դեկտեմբերի 02-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք՝ 15. 11. 2022թ. ծանուցում azdarar.am կայքում/ Ռուստամ Միհրանի Սահրադյանը: Վերջինս չի ներկայացել վարչական վարույթի լսումներին: 02. 12. 2022թ. վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված Ռուստամ Միհրանի Սահրադյանի բացակայությամբ:

ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 239-րդ հոդվածի՝ փոխադրամիջոցի գույքահարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 240-րդ հոդվածի՝ փոխադրամիջոցների գույքահարկ վճարողներ են համարում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք: Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 46-րդ հոդվածի՝ տեղական հարկերի գծով հարկային պարտավորությունների կատարում /մարում/ է համարվում Օրենսգրքին համապատասխան հաշվարկված վճարման ենթակահարկի, ինչպես նաև դրա գծով տույժերի և /կամ/ տուգանքների գումարների վճարումը համապատասխան հարկի գծով պարտավորությունը հաշվառող տեղական բյուջեի գանձապետական հաշվին:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 251-րդ հոդվածի՝ կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի տարեկան գումարները իրենց պետական գրանցման /հաշվառման/ վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի՝ համայնքի ղեկավարը որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը, ինչպես նաև տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ հարկային օրենսգրքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, **որոշում եմ**

1. Ռուստամ Միհրանի Սահրադյանից հոգուտ Գավառ համայնքի բյուջե գանձել ընդամենը 508270/հինգ հարյուր ութ հազար երկու հարյուր յոթանասուն/ ՀՀ դրամ որպես MERCEDES-BENZ E300 DT մակնիշի 35 DL 411 պետհամարանիշի փոխադրամիջոցի գույքահարկերի գումար, ներառյալ տույժերը:
2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Գավառի համայնքապետին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց եռամսյա ժամկետում:
4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Գավառ համայնքի ղեկավարը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման մասին օրենքով սահմանված պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՓԱՆՏԻՐՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavariqaghaqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
02 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 1080-Ա

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Քաղաքացի Սևակ Վահագնի Եղիազարյանը (անձնագիր՝ AU0580059, ՀՕՀ՝ 3511770538, հաշվառված ՀՀ Գեղարքունիքի մարզ, Գավառ համայնք, գ. Նորատուս Սևանի փ. 11 նրբ., 5 տ) հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունները, ինչի կապակցությամբ 2022 թվականի նոյեմբերի 15-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի „բ“ ենթակետի հիմքով Գավառի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գումարների գանձման հարցի ընտրության նպատակով:
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ընտրության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՓԱՍՏԵՐԸ

Համաձայն ՀՀ ՀՔԲ-ի կողմից տրամադրված փոխադրամիջոցների հաշվառման ու գնահատման տվյալների, GAZ 24-10 մակնիշի 34 QV 886 պետհամարանիշի փոխադրամիջոցը հանդիսանում է Սևակ Վահագնի Եղիազարյանի սեփականությունը, ինչը ՀՀ Հարկային օրենսգրքով հանդիսանում են հարկվող օբյեկտ:

Գույքի համար վճարման ենթակա գույքահարկը կազմում է 70000/յոթանասուն հազար /ՀՀ դրամ, ինչը 2016-2021թթ. ժամանակահատվածում չի վճարվել, իսկ Սևակ Վահագնի Եղիազարյանի կողմից նշված ժամանակահատվածի գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է գույքահարկի համար տույժ՝ 20802/քսան հազար ութ հարյուր երկու/ՀՀ դրամի չափով:

2022 թվականի նոյեմբերի 15-ին «Վարչարարության և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի „բ“ կետի հիմքով Գավառի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2022 թվականի դեկտեմբերի 02-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք՝ 15.11.2022թ. ծանուցում azdarar.am կայքում/ Սևակ Վահագնի Եղիազարյանը: Վերջինս չի ներկայացել վարչական վարույթի լսումներին: 02.12.2022թ. վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված Սևակ Վահագնի Եղիազարյանի բացակայությամբ:

ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 239-րդ հոդվածի՝ փոխադրամիջոցի գույքահարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 240-րդ հոդվածի՝ փոխադրամիջոցների գույքահարկ վճարողներ են համարում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք: Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 46-րդ հոդվածի՝ տեղական հարկերի գծով հարկային պարտավորությունների կատարում /մարում/ է համարվում Օրենսգրքին համապատասխան հաշվարկված վճարման ենթակա հարկի, ինչպես նաև դրա գծով տույժերի և /կամ/ տուգանքների գումարների վճարումը համապատասխան հարկի գծով պարտավորությունը հաշվառող տեղական բյուջեի գանձապետական հաշվին:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 251-րդ հոդվածի՝ կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի տարեկան գումարները իրենց պետական գրանցման /հաշվառման/ վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի՝ համայնքի ղեկավարը որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը, ինչպես նաև տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ հարկային օրենսգրքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, **որոշում եմ**

1. Սևակ Վահագնի Եղիազարյանից հոգուտ Գավառ համայնքի բյուջե գանձել ընդամենը 90802/իննսուն հազար ութ հարյուր երկու/ ՀՀ դրամ որպես GAZ 24-10 մակնիշի 34 QV 886 պետհամարանիշի փոխադրամիջոցի գույքահարկերի գումար, ներառյալ տույժերը:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Գավառի համայնքապետին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Գավառ համայնքի ղեկավարը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման մասին օրենքով սահմանված պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրը:



/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 02
ք. Գավառ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavarigaghagapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 1081-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԲԵԼԱԳՈՐԾՆԵՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 12-ՐԴ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ
ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻՆ ԿԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿՑԱԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

